ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 63-Լ

«10» 09 2025թ. ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիգեն Ռուբենի Հարությունյանին Լոռու կայազորի զինվորական դատախազի պաշտոնին փոխադրելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 04.09.2025թ. N 378-Ա և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի պետի պարտականությունների կատարումը նույն բաժնի ավագ դատախազ Վազգեն Լյովայի Վարդանյանին վերապահելու մասին 04.09.2025թ. N 379-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Վ. Հարությունյանի կողմից՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Վ. Վարդանյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Էլիզբարյան Գրիգոր - Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Մարտիրոսյան Վիրաբ-	ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի ավագ դատախազ
Առաքելյան Ռուբեն -	Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ
Նազարեթյան Արմինե -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Ղահրամանյան Մարուշ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար
Մանուկյան Լիաննա -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Հարությունյան Աստղիկ -	ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության տարածքային վարչության պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ԱՐԱՄՅԱՆ**